



**ԱԶԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
ՀՊՏՀ տնտեսագիտության  
տեսության ամբիոնի հայցորդ

## **ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ԽՁԱՆՄԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Ներդրումները տնտեսական աճի նյութական հիմքն են և, դրանով իսկ, հասարակության բարեկեցության և աղքատության կրճատման կարևոր նախադրյալը: Այս խնդիրը կարևորվում է հատկապես զարգացող երկրներում, որտեղ ներդրումները խթանելու տնտեսական և ինստիտուցիոնալ նախադրյալները գերակա նշանակություն են ստանում: Զարգացող երկրները «աղքատության կամ հետամնացության փակ շրջագծից» դուրս գալու համար օգտագործում են ոչ միայն սեփական, այլև արտաքին ներդրումային միջոցները:

Հոդվածի նպատակն է հետազոտել «ներդրում – տնտեսական աճ – աղքատության կրճատում» շղթան ուսումնասիրող տնտեսագիտական տեսությունների հիմնադրույթները, որոնք առավելապես վերաբերում են զարգացող երկրներում հասարակության ցածր բարեկեցության և աղքատության բարձր մակարդակի պատճառների բացահայտմանը:

**Հիմնաբառեր.** ներդրում, տնտեսական աճ, աղքատության կրճատում, բարեկեցության բարձրացում, աղքատության փակ շրջագիծ, հետամնացության արատավոր շրջան, աղքատության արատավոր շրջան

JEL: H54, I30, P33

Աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականությունը հնարավոր չէ առանձնացնել երկրի ընդհանուր տնտեսական քաղաքականությունից: Աղքատության հիմնախնդիրը միշտ էլ եղել է տնտեսագիտական տարբեր ուղղությունների ուսումնասիրման առարկան: Դրան և դրա լուծման ան-

հրաժեշտությանն անդրադարձել է դասական տնտեսագիտության հիմնադիր Ա. Սմիթը, նշելով, որ «ոչ մի հասարակություն չի կարող երջանիկ համարվել, եթե նրա զգալի մասը աղքատ է ու ոչ երջանիկ»<sup>1</sup>: Ժամանակակից տնտեսագիտությունը մարդկային զարգացման հիմնախնդիրները դիտարկում է տնտեսական զարգացման համատեքստում, և, այդ առումով, կարևորվում է տնտեսական աճը, որի դեպքում բարձրանում է բարեկեցության մակարդակը, նվազում՝ աղքատության աստիճանը: Հակառակ դեպքում, ցանկացած տնտեսական աճ կարող է ինքնանպատակ լինել, քանի որ չի ծառայում մարդկային զարգացման գերխնդրին՝ հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը: Քանի որ աղքատության հաղթահարման հիմնախնդիրը գտնվում է տնտեսության զարգացման հարթությունում, ապա անմիջականորեն կախվածության մեջ է տնտեսության մեջ ներդրումների ներգրավման տեմպերից, մակարդակից և կառուցվածքից<sup>2</sup>:

Աղքատության հիմնախնդիրը տնտեսագիտական տեսություններում առաջին հերթին վերլուծվում է «Աղքատության արատավոր շրջան» հայեցակարգի միջոցով<sup>3</sup>: Մեկ այլ տարբերակով դա կոչվում է նաև «Մեծ հրման» տեսություն՝ նկատի ունենալով, որ աղքատության շրջագծից դուրս գալու համար անհրաժեշտ է խթանել ներքին ու արտաքին մեծ ծավալի ներդրումները: Այս տեսությունը հիմնված է արտադրության գործոնների արդյունավետության մակարդակի բարձրացման, ներդրումների ներգրավման, կուտակման, խնայողության գործընթացի խրախուսման միջոցով տնտեսական զարգացումն ապահովելու գաղափարի վրա: «Աղքատության արատավոր շրջան» տեսությունը ծագել է «երրորդ աշխարհի» երկրների տնտեսություններն ուսումնասիրելու արդյունքում: Այս տեսությունն առաջադրվել է Հ. Ջինգերի և Ռ. Պրեբիշի կողմից՝ դեռևս 1949–1950 թթ.: Վերջիններս փորձում էին երկրների հետամնացությունը բացատրել տնտեսական և ժողովրդագրական գործոնների փոխազդեցության միջոցով: Ըստ էության, «Աղքատության արատավոր շրջան» տեսության էությունը հետևյալն է. զարգացող երկրներում տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպերի շնորհիվ ազգային եկամուտը մեծանում է, որը մեկ շնչի հաշվով նույնպես աճում է, սակայն կյանքի որակի բարելավումը կարճատև է լինում, քանի որ արագորեն «խժժվում», կլանվում է բնակչության արագ աճի հետևանքով, և վերջինս չի կարողանում դուրս գալ աղքատության վիճակից: Այսպիսով՝ ձևավորվում է փակ կամ կախարդական շրջան, և, տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելով հանդերձ, միևնույն է, թույլ զարգացած երկրներում չեն նկատվում առաջընթաց կամ զարգացում և բնակչության բարեկեցության էական բարձրացում ու աղքատության կրճատում:


Վերը նշված տեսության մեկ այլ տարբերակ է «Հետամնացության արատավոր շրջանը», որն առաջադրվել է Բ. Կնալլի կողմից 1960-ական թվականներին: Ըստ այդ տեսության՝ երկրի տնտեսական հետամնացությունը հան-

<sup>1</sup> Смит А., Исследование о природе и причинах богатства народов. М., 1962, с. 73. Ավելի մանրամասն տես նաև Գ. Կիրակոսյան, Մ. Թավադյան, Ս. Գրիգորյան, «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն», Եր., «Տնտեսագետ», 2004, էջ 130:

<sup>2</sup> Տե՛ս Տ. Զրբաշյան, Ն. Մելիքյան, Ներդրումային քաղաքականության ուղղվածության հիմնահարցը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում, Եր., 2002, էջ 7:

<sup>3</sup> Տե՛ս Нуреев Р.М., Экономика развития: модели становления рыночной экономики. М., 2008, էջ 31–41: История экономических учений (современный этап), под. ред. А.Г. Худакормова. М., 1999, էջ 451–459:

գեցնում է ներդրումների անբավարարության, որի պատճառով ոչ բավարար հատկացումներ են կատարվում կրթության և պրոֆեսիոնալ պատրաստվածության ապահովման նպատակով: Դրա հետևանքով առաջանում է աշխատանքային ռեսուրսների ցածր պատրաստվածություն և բարձրորակ մասնագետների պակաս, դա էլ իր հերթին արտահայտվում է աշխատանքի ցածր արտադրողականությամբ, և երկիրը դարձյալ մնում է տնտեսական հետամնացության շրջագծի մեջ: «Հետամնացության արատավոր շրջանը» կարող ենք ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 1. «Հետամնացության արատավոր շրջանը» ըստ Բ. Կնալի

Նշված տեսության տարբերակ է տնտեսական ձգնաժամի պատճառները ներքին շուկայի սահմանափակությամբ և նորացման համար անհրաժեշտ ռեսուրսների պակասով բացատրող տեսությունը, որն առաջադրվել է Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ռ.Նուրկսեի կողմից: Դրա համաձայն՝ կապիտալի անբավարար մակարդակի պայմաններում երկրում ընկնում է աշխատանքի արտադրողականության մակարդակը: Վերջինս իր հերթին ազդելով եկամուտների վրա՝ պայմանավորում է դրանց ցածր մակարդակը, որը պատճառ է դառնում վճարունակության անկման: Հետևաբար՝ երկրում ձևավորվում է ներդրումային ոչ բարենպաստ միջավայր: Սահմանափակ խնայողությունների պայմաններում կապիտալի բացակայությունը դիտվում է որպես նման հասարակությանը բնորոշ առանձնահատկություն: Այս տեսության շրջանակներում, որպես թերզարգացվածության նախահիմք, դիտարկվում է ինստիտուցիոնալ հետամնացությունը, մասնավորապես՝ աշխատուժի ցածր մակարդակը:


Ռ. Նուրկսեի «Կապիտալի անբավարարության արատավոր շրջանը» կարելի է բնութագրել հետևյալ գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 2. «Կապիտալի անբավարարության արատավոր շրջանը» ըստ Ռ. Նուրկսեի


Համաձայն քեյնսյան ավանդական մոտեցումների՝ «Աղքատության արատավոր շրջանը» բացատրվում է եկամուտների ցածր մակարդակով, որն էլ ենթադրում է սպառման և խնայողությունների ցածր մակարդակ: Այսպես՝ սպառման ցածր մակարդակը վերածվում է ոչ արդյունավետ պահանջարկի, որի հետևանքով ներքին շուկան նեղանում է, նվազում են ներդրումների աճի տեմպերը, ինչը հանգեցնում է արտադրության ցածր արդյունավետության, ցածր շահութաբերության և արտադրության աճի թույլ խթանների:

«Աղքատության արատավոր շրջանի» քեյնսյան մոտեցումը կարելի է արտահայտել է հետևյալ գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 3. «Աղքատության արատավոր շրջանը» ըստ քեյնսականության

«Աղքատության արատավոր շրջանը» լրացվում է «քաղաքական անկայունության արատավոր շրջանով», երբ առաջանում է սեփականության իրավունքների ոտնահարման, մասնավոր ձեռնարկությունների ազգայնացման հավանականություն: Դա կարելի է արտահայտել հետևյալ գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 4. Տնտեսական և քաղաքական անկայունության փոխադարձ կապը

Ջարգացող երկրների ուսումնասիրությանը նվիրված արևմտյան ժամանակակից տեսությունների շարքում իր ուրույն տեղն ունի «Ինքնախթանող, ինքնաշակցող աճի» հայեցակարգը, որն առաջ է քաշվել ամերիկացի տնտեսագետ Ու. Ռոսթրոուի կողմից 1956 թ.: Ջարգացնելով այս հայեցակարգը՝ Ռոսթրոուն 1960 թ. ներկայացրեց տնտեսական աճի փուլային տեսությունը, որը հիմք ծառայեց «Մեծ իրման» տեսության համար, ըստ որի անհրաժեշտ է

մեծածավալ ներդրումներ կատարել տնտեսության մեջ, որպեսզի այն դուրս գա աղքատության ու հետամնացության արատավոր շրջանից»: Վերջինս կարելի է բնութագրել որպես «Աղքատության արատավոր շրջանի» և «Ինքնախթանող աճի» հայեցակարգի համադրություն: Այս տեսության հիմնադիրը Պ. Ռոզենշթեյն-Ռոդանն է: Հետագայում տեսությունը զարգացրին արևմտյան տնտեսագետներ Հ. Լեյբեյնստայնը, Ա. Հիրշմանը, Հ. Ջինգերը: Նրանք հիմնական ուշադրությունը կենտրոնացրին ներդրումներին, որոնք, պայմանավորված լինելով պետության տնտեսական քաղաքականությամբ, պետք է նպաստեին երկրի տնտեսական աճին: Անհրաժեշտ էր այդ մոդելը լրացնել և տարածել երկարաժամկետ հատվածի համար: Այդ խնդրի լուծման փորձերը ձեռնարկեցին Ռ. Հարոդը (1939) և Ե. Դոմարը 1940-ական թվականների վերջին: Փոփոխական մեծությունը, որի միջոցով նրանք փորձում էին կառավարել տնտեսական աճը, ներդրումների ծավալն էր: Ըստ Դոմարի՝ տնտեսության մեջ հավասարակշռություն ապահովելու համար ներդրումները և ազգային եկամուտը պետք է աճեն միանման և հաստատուն տեմպերով: Ակնհայտ է, որ նման դինամիկ հավասարակշռությունը կայուն չէ, քանի որ մասնավոր հատվածում ներդրումների աճի տեմպերը կարող են հաշվարկայինի նկատմամբ տատանվել: Հետևաբար՝ Ռ. Հարոդն այս տեսակետը լրացրեց ձեռնարկատերերի սպասումներով, որոնք, որպես կանոն, սեփական արտադրության ծավալները պլանավորում են նախորդ ժամանակահատվածի ձևավորված իրավիճակից ելնելով:

Այս հեղինակները որպես ելակետ ընդունում էին այն փաստը, որ «երրորդ աշխարհի» երկրների զարգացման համար անհրաժեշտ են կապիտալի խոշոր ներարկումներ: Շեշտը դրվում էր հարկադիր խնայողությունների վրա, որոնք պետք է ձևավորվեն պետության դրամավարկային և հարկային քաղաքականությունների արդյունքում: Վերջիններիս ոչ արդյունավետ իրականացումը կարող է փոխհատուցվել կապիտալի ներմուծմամբ, որը պետք է բավարար լինի զարգացման համար, հակառակ դեպքում դրանք կուղղվեն ընթացիկ պահանջմունքների բավարարմանը: «Մեծ հրման» տեսության կողմնակիցները կարծում էին, որ շուկան ի վիճակի չէ տնտեսությունն ինքնուրույնաբար դուրս բերելու «աղքատության արատավոր շրջանից», և առաջ քաշվեց ռազմավարական պլանավորման գաղափարը՝ որպես խառը հասարակության ձևավորման հիմք:

Տնտեսական աճի գործընթացում ներդրումների դերը կարևորող տեսություն է «Երկու պակասուրդով տնտեսական աճ» տեսությունը, որը մշակվել է 1960–70-ական թվականներին մի խումբ նորթեյնսյան հետազոտողների կողմից, որոնց թվում են Հ. Չեներին, Մ. Ստրաուտը, Հ. Էքստեյնը, Ն. Քարտերը: Ըստ այս մոտեցման՝ տնտեսական աճը բնութագրվում է ներքին (խնայողությունների պակասուրդ) և արտաքին (առևտրային պակասուրդ) ռեսուրսներից կախվածությամբ: Այս դեպքում ներքին համախառն ներդրումների և ներքին համախառն խնայողությունների տարբերությունը կարող է փոխհատուցվել արտասահմանյան օգնություններով: Ներմուծման և արտահանման տարբերությունը ևս կարելի է փոխհատուցել արտասահմանյան օգնություններով:

Հետագայում տնտեսական աճի քեյնսյան տեսությունն իր տեղը զիջեց նորդասականների (Ու. Լյուիս, Ա. Հիրշման, Ս. Շաոց) տեսությանը, համաձայն որի տնտեսական զարգացման հիմքը ներքին ռեսուրսներն են, այլ ոչ թե

օտարերկրյա ներդրումները: Իր հայեցակարգը Ու. Լյուիսը կառուցում էր՝ տնտեսական զարգացման գործընթացում գնահատելով ձեռնարկատիրոջ դերն ու նշանակությունը: Լյուիսի մոտեցման համաձայն՝ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է ռեսուրսներն ագրարային հատվածից վերաբաշխել դեպի արդյունաբերություն: Ըստ որում, այդ գործընթացում պետք է լուծում ստանային երկու կարևոր խնդիրներ. նախ՝ ներդրումների ներգրավումը (խնայողությունների հավաքագրում և դրանց ներդրումային ուղղվածության հաղորդում), երկրորդ՝ զբաղվածության ապահովումը, այսինքն՝ նյութական և աշխատանքային ռեսուրսների ավելցուկ ունեցող ճյուղերից դրանց վերաբաշխումը պահանջարկ ներկայացնող ճյուղեր: Ուստի, զարգացումը Լյուիսի մոտ դիտարկվում է որպես նյութական և աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման, արտադրական հատվածի ընդլայնման եղանակ:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ դիտարկված տեսությունները, իրենց տարբերություններով հանդերձ, ունեն շփման ընդհանուր եզրեր, որոնք առաջին հերթին վերաբերում են ներդրումների ներգրավման միջոցով տնտեսական աճի և բնակչության բարեկեցության բարձրացման խնդրի դիտարկմանը և որոշակի լուծումների առաջարկմանը: Այսինքն՝ միևնույն խնդիրն նշված տեսություններն անդրադառնում են տարբեր տեսանկյուններից, և անժխտելի է դառնում այն փաստը, որ վերջին ժամանակներս անցումային երկրներում առավել սուր դրսևորում ունեցող աղքատության հաղթահարման հիմնախնդիրն անմիջականորեն առնչվում է ներդրումային քաղաքականությանը:

Աղքատությունը կրճատելու համար կարևոր նշանակություն ունեն նաև պետության սոցիալական աջակցությունները, ինչպես նաև բարեգործությունները, որոնք օգնում են կարիքավորներին: Սակայն դրանք, ի վերջո, բացասական հետևանքներ են ունենում, որովհետև չեն խրախուսում աշխատասիրությունը, ինքնապահպանման ձգտումը: Առավել ևս, որ սոցիալապես անապահով, աղքատ խավերին տրվող սոցիալական օգնությունների զգալի մասը բուն հասցեատերերին չի հասնում: Ամերիկացի տնտեսագետ Ա. Օուքենը, հետազոտելով այս հիմնախնդիրը, հանգել է այն եզրակացության, որ աղքատներին ուղղված պետական սոցիալական օգնությունների, տրանսֆերտների գրեթե 70%-ը «կորչում է ճանապարհին» և բուն աղքատներին չի հասնում, որը տնտեսագիտության մեջ ստացել է սոցիալական օգնությունների «ծակ դույլ» կամ «Օուքենի դույլ» անվանումը<sup>4</sup>:

Թերևս այս տրամաբանությամբ հիմնավորվեց ՀՀ Կառավարության որոշումը՝ հանել գործազրկության 18 հազար դրամի նպաստը և դա ուղղել գործազուրկներին նոր մասնագիտություններ սովորեցնելուն, ինչպես նաև նոր աշխատատեղեր ստեղծելուն: Բնականաբար, դրա համար անհրաժեշտ են նոր կապիտալ ներդրումներ: Այսինքն՝ աղքատության կրճատման նպատակով կարևորվում են ներդրումները, այլ ոչ թե բարեգործություններն ու սոցիալական օգնությունները: Այս հիմնախնդրի լուծումը շատ վաղուց է առաջարկվել: Այսպես՝ դեռևս մեր թվարկությունից առաջ 5-րդ դարում Հին Չինաստանի մեծագույն փիլիսոփա ու մտածող Կոնֆուցիոսն ասել է. «Ավելի լավ է սովյալին ուռկան տամ, որ ծուկ բռնի և սնվի, քան ամեն օր նրան ձկով կերակրեմ»<sup>5</sup>:

<sup>4</sup> Տե՛ս Կրթ. экономической теории. под ред. М. Чепурина. М., 2010, էջ 681:

<sup>5</sup> Տե՛ս Քիզնետի բարոյականության և սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Տնտեսագետ», 2015, էջ 27:

Այսպիսով՝ ներդրումները կարևոր գործոն են ինչպես տնտեսական աճի, այնպես էլ սոցիալական խնդիրների և, նախևառաջ, աղքատության հիմնախնդրի լուծման համար:

#### Օգտագործված գրականություն

1. Կիրակոսյան Գ., Թավադյան Մ., Գրիգորյան Ս., Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր., «Տնտեսագետ», 2004:
2. Ջրբաշյան Տ., Մելիքյան Ն., Ներդրումային քաղաքականության ուղղվածության հիմնահարցը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում, Եր., 2002:
3. Բիզնեսի բարոյականության և սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015:
4. Смит А., Исследование о природе и причинах богатства народов. М., 1962.
5. Нуреев Р.М., Экономика развития: модели становления рыночной экономики. М., 2008.
6. История экономических учений (современный этап), под. ред. А.Г. Худакормова. М., 1999.
7. Курс экономической теории /под ред. М. Чепурина/. М., 2010.

**АЗАТ ГРИГОРЯН**

Соискатель кафедры экономической теории АГЭУ

***Теоретическая проблема стимулирования инвестиций и сокращения бедности в развивающихся странах.***–

Инвестиции – это материальная основа экономического роста и важная предпосылка для благосостояния общества и сокращения бедности. Эта задача особенно важна в развивающихся странах, где экономические и институциональные предпосылки имеют первостепенное значение. Развивающиеся страны для выхода из “замкнутого круга нищеты или отсталости” используют не только свои собственные, но и внешние инвестиционные средства.

Целью статьи являются основы экономических теорий, изучающих цепочку “инвестиции - экономический рост - сокращение бедности”, которая в основном способствует к выявлению причин низкого уровня общественного благосостояния и высокого уровня бедности в развивающихся странах.

**Ключевые слова:** *инвестиции, экономический рост, сокращение бедности, рост благосостояния, замкнутый круг бедности, порочный круг отсталости, порочный круг бедности.*  
JEL: H54, I30, P33

**AZAT GRIGORYAN**

Researcher at the Chair of Economic Theory of ASUE

***The Theoretical Issue of Stimulating Investments and Poverty Reduction in Developing Countries.***–

Investments are the material basis for economic growth and an important premise for the well-being of society and poverty reduction. This task is especially important for developing countries, where economic and institutional priorities are of primary importance. Developing countries to overcome the "circle of poverty or backwardness" use not only their own, but also external investment funds.

The aim of the article is the fundamentals of economic theories studying the chain of investment - economic growth - poverty reduction, which mainly relates to the disclosure of the reasons for the low level of social welfare and high poverty in developing countries.

**Key words:** *investments, economic growth, poverty reduction, welfare growth, vicious circle of poverty, vicious circle of backwardness, vicious circle of poverty.*  
JEL: H54, I30, P33